**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

---

«09» 11 2012 թ. № Ա-705

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

Համաձայն 29.10.12թվականի թիվ 1/4.1-2/14007-12 գրության՝ հայտնում ենք, որ հաշվի առնելով <<Պարզեցված ընթացակարգով>> գնման գործընթացի համար սահմանված տևական ժամանակահատվածը, ինչպես նաև շինարարության համար պահանջվող ժամանակը մտահոգություն ունենք, որ նշված աշխատանքները օբյեկտիվորեն չեն կարող ավարտվել մինչև ջեռուցման սեզոնի սկիզբը, ինչը կխաթարի ՀՀ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը:

Ուստի, խնդրում ենք Ձեր միջնորդությունը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի պետական բյուջեի 5113 <<ՀՀ ԱԺ կաթսայատան նորոգման>> (12000.0 հազ. դրամ) և <<ՀՀ ԱԺ 3-րդ մասնաշենքի տանիքի նորոգման>> (4760.0 հազ. դրամ) հոդվածով նախատեսված գնման ենթակա աշխատանքները և ծառայությունները <<**Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության**>> գնման ձևով ձեռք բերելու հարցը:

Միևնույն ժամանակ ներկայացնում ենք ՀՀ կառավարության 20.10.2012թ-ի N 1259-Ն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի դ) պարբերությամբ նախատեսված՝ մասնակիցների կողմից ստացված հայտերը և դրանց ուսումնասիրության արդյունքում մեր կողմից առաջարկվող հաղթող մասնակիցը:

Հարգանքով ԳՈՒՐԳԵՆ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հայաստանի ... Ֆինանսների ... նախարարություն
«09» 11 2012թ.
Մուտք թիվ 38663

Կատարող՝ Գ. Մարգարյան
Հեռ. 010-51 36 05

---

# ՏԵՂԵԿԱՆՔ

Ներկայացնում ենք ՀՀ կառավարության 20.10.2012թ-ի N 1259-Ն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի դ) պարբերությամբ նախատեսված՝ մասնակիցների կողմից ստացված հայտերը և դրանց ուսումնասիրության արդյունքում մեր կողմից առաջարկվող հաղթող մասնակցին.

"ՀՀ ԱԺ կաթսայատան նորոգում" - "ՌԵՄ գրուպ" ՍՊԸ

"ՀՀ ԱԺ 3-րդ մասնաշենքի տանիքի նորոգում" - "ՌԵՄ գրուպ" ՍՊԸ

ՀՀ ԱԺ գործերի կառավարիչ Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

# <<ՌԵՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ

ՀՀ Աժ գործերի կառավարիչ

պրն Հ. Մկրտչյանին

Ի պատասխան Ձեր 01.11.2012թ. N ԳԿ-087 գրության, սույնով հավաստում ենք, որ <<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ -ն ունի

- մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանգրով նախատեսված գործունեությանը
- մասնագիտական փորձառություն
- տեխնիկական միջոցներ
- ֆինանսական միջոցներ
- աշխատանքային ռեսուրսներ:

<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ -ն հայտնում է իր համաձայնությունը վերոնշյալ գրության մեջ նշված ՀՀ Ազգային ժողովի կաթսայատան նորոգամ աշխատանքները կատարել 12 000 000 ՀՀ դրամով և ՀՀ Ազգային ժողովի 3-րդ մասնաշենքի տանիքի նորոգման 4 750 000 դրամով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ տնօրեն ________

«ԴԱԼՄԱ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի 3
Հեռ. 077 550 510

ООО "ДАЛМА ШИН"
РА, г. Ереван, Цицернакаберд 3
Тел. 077 550 510

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
գործերի կառավարիչ
պարոն Հ. Մկրտչյանին

Ի պատասխան Ձեր 01.11.2012թ. թիվ ԳԿ-090 գրության, հավաստում եմ,որ

<<ԴԱԼՄԱ ՇԻՆ>> ՍՊԸ-ն ունի.

- Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
-Մասնագիտական փորձառություն
-Տեխնիկական միջոցներ
-Ֆինանսական միջոցներ
-Աշխատանքային ռեսուրսներ

<<ԴԱԼՄԱ ՇԻՆ>> ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը վերոնշյալ գրության մեջ նշված ՀՀ Ազգային ժողովի կաթսայատան նորոգման աշխատանքները կատարել 12.500.000 /տասներկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով և ՀՀ Ազգային ժողովի 3-րդ մասնաշենքի տանիքի նորոգման աշխատանքները ՝ 5.300.000 / հինգ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամով:

<<ԴԱԼՄԱ ՇԻՆ>> ՍՊԸ տնօրեն Վ. Խաչատրյան

ՀՀ ԱԺ գործերի կառավարիչ

պրն Հ. Մկրտչյանին

Ի պատասխան Ձեր 01.11.2012թ. N ԳԿ-088 գրության, սույնով հավաստում ենք, որ <<Իմանի Հոլդինգ>> ՍՊԸ -ն ունի

- մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանգրով նախատեսված գործունեությանը
- մասնագիտական փորձառություն
- տեխնիկական միջոցներ
- ֆինանսական միջոցներ
- աշխատանքային ռեսուրսներ:

<<Իմանի Հոլդինգ>>ՍՊԸ -ն հայտնում է իր համաձայնությունը վերոնշյալ գրության մեջ նշված ՀՀ Ազգային ժողովի կաթսայատան նորոգամ աշխատանքները կատարել 12 500 000 ՀՀ դրամով և ՀՀ Ազգային ժողովի 3-րդ մասնաշենքի տանիքի նորոգման 5 000 000 դրամով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

<< Իմանի Հոլդինգ >>ՍՊԸ տնօրեն